

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 24-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2021  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**

Ես՝ Մարիամ Սերգեյի Առաքելյանս, 2020 թվականի հուլիսի 24-ից մինչև սույն թվականի հունվարի 24-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Mulberry2 էլեկտրոնային համակարգով պատրաստել եմ մոտավորապես 30 փաստաթղթեր (արտաքին և ներքին շրջանառության):
2. Համակարգել և իրականացրել եմ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին 1332Ն (այսուհետ՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն) որոշումից բխող միջազգային փորձի ուսումնասիրություն, միջոցառումների կատարմանն ուղղված այլ գործողություններ:
3. Մասնակցել եմ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների ամփոփման աշխատանքներին:
4. Մասնակցել եմ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 2-րդ և 5-րդ գլուխների՝ Հայաստանում իրականացման այլընտրանքային զեկույցի վերաբերյալ ՀՀ ԱՆ կողմից դիրքորոշման կազմման աշխատանքներին:
5. Մասնակցել եմ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ պիլոտային փուլի շրջանակներում իրականացվող աշխատանքների կատարմանը:

6. Մասնակցել եմ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ 2020 թվականին կատարման ենթակա աշխատանքների վերաբերյալ հաշվետվության մշակմանը:

Մարիամ Առաքելյան՝

22.01.21

A handwritten signature in blue ink, appearing to read 'Մարիամ' (Mariam), with a long horizontal stroke extending to the left.